ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 152- Ա **24 օգոստոսի 2015 թ.**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

կարգադրում եմ՝

1. Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնտեսված միջոցների հաշվին իրականացվող շինարարական վերանորոգման աշխատանքների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Զոհրաբյան Արմեն – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ,նախագահ

Խաչատրյան Հայկ – մարզպետի խորհրդական

Մելքոնյան Գուրգեն - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ

Գրիգորյան Գրիգոր - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի առաջատար մասնագետ

Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներին:

2. Հանձնաժողովին՝ վերահսկողության արդյունքների մասին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ ՀԱՍԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ